Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ. Գանձասարի պատմություն, *Երևան, «Գանձասար աստվածաբանական կենտրոն» հրատ., 2005, 460 էջ:*

*2005 թ. պատմաբան, գիտությունների դոկտոր Է. Լ. Դանիելյանը հրապարակեց Գանձասարի վանքի պատմությանը նվիրված ծավալուն մեջբերումներով ու հաճախ անհարկի, ընդարձակ ծանոթագրություններով ծանրաբեռ սույն մենագրությունը*[1]*, որի ամբողջական պատկերը չէ, սակայն, որ պատրաստվում ենք ներկայացնել: Դա մեր խնդրից դուրս է: Գրքում հեղինակը, ցանկանալով իր խոսքն ունենալ նաև աղվանագիտության բնագավառում, անդրադարձել է Աղվանքի պատմության մի քանի հարցերի և դրանց առնչությամբ այնպիսի կարծիքներ հայտնել, որոնք, մեղմ ասած, ճիշտ չեն, ուստի և միանգամայն անընդունելի: Այդ անընդունելի մտքերն էլ հարկադրեցին մեզ հանդես գալ և փորձել պարզություն մտցնել առանձնապես այն խնդիրներում, որոնք վաղուց է, ինչ դարձել են հայ և ադրբեջանցի հեղինակների բանավեճերի նյութ և, մանավանդ, անխղճորեն շահարկվում են վերջիններիս կողմից: Դրանց շարքում առանցքայիններից է Հայկազուն Սիսակի ժառանգ Առանին Հայոց Հյուսիս-Արևելից կողմերում կուսակալ նշանակելու մասին պատմահայր Մովսես Խորենացու հաղորդման մեկնաբանությունը: Բերելով Խորենացու համապատասխան հաղորդումը Առանին բաժին հասած կուսակալության սահմանների մատնանշումով, «պարզելով», որ «պատմահոր հաղորդումից երևում է, որ խոսքը Սիսական նախարարական տոհմից սերած և Առանի գլխավորած հայկական նախարարական տոհմի հաստատման մասին է» (էջ 38), նա անսպասելիորեն եզրակացնում է. «Ըստ Մովսես Խորենացու՝ Կուրի ձախափնյակում գտնվող «բուն Աղուանք» անունով տարածքի կուսակալ նշանակված նախարարական տոհմը սերել է Հայկազունի Սիսական տոհմից» (էջ 38), որը ոչինչ այլ բան չի նշանակում, քան այն, որ բուն Աղվանքի առաջին տիրակալը եղել է Առանը: Եվ դա ասվում է այն դեպքում, երբ մի թռուցիկ հայացքն էլ բավական էր հասկանալու համար, որ Խորենացու վկայակոչված հաղորդումը (և ոչ էլ պատմահոր որևէ այլ հաղորդում) բնավ էլ նման կամ գոնե մոտավորապես նման եզրակացության հիմք չի տալիս: Ահա այն. «…մեծ և անուանի և բազմաբիւր* զարևելից հիւսիսոյ կողմանն *կարգէ (Վաղարշակ – Հ. Ս.) կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտավորութեան և հանճարոյ առաջին, զԱռան* առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր *… զգունդն, որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի,* ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ. *և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա (Սիսակի – Հ. Ս.) անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա»*[2]: Ինչպես ցույց են տալիս հաղորդման ընդգծված տողերը, Առանը կուսակալ է նշանակվում Մեծ Հայքի հյուսիսարևելյան կողմերում («զարևելից հիւսիսոյ կողմանն») մի տարածքի վրա, որի սահմաններն հյուսիսում պատնեշվում էին Կուր գետի ընթացքով («առ մեծ գետովն, որ … անուանի Կուր»), հարավում՝ Երասխ գետով, իսկ հյուսիսարևմուտքում՝ Հնարակերտ ամրոցով («ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ»): Առանի երկրի համար նույն սահմաններն է մատնանշում նաև Մովսես Կաղանկատվացին՝*

[1] *Աշխատությունը տպագրված է արևմտահայ ուղղագրությամբ: Մենք դրանից մեջբերումներ անելիս, վերածել ենք արևելահայերենի:*

[2] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, քնն. բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 113 (այսուհետև՝ Խորենացի), այս և հետագա մեջբերումներում ընդգծումները մերն են:*

*Խորենացու նման այն անվանելով նաև «Աղուանք»[3]: Պատմիչների այսքան պարզորոշ ու հստակ տեղեկությունները կասկածի ոչ մի նշույլ չեն թողնում, որ նրանց ցույց տված աշխարհը Մեծ Հայքի հյուսիսարևելյան կողմերում տարածված և նշված սահմաններում պարփակված երկրամասն է՝ Կուր և Արաքս գետերի միջև ընկած երկիրը: Հետևաբար, առանձնահատուկ երևակայություն պետք չէր ունենալ կարծելու, որ հենց այս շրջանակներում՝ ոչ թե մի այլ, հեռավոր երկրում է կուսակալ նշանակվել իսկապես Հայկազյան Սիսակից սերված ժառանգորդը և իր հերթին սերել տեղի հայ չորս իշխանություններին. «Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»[4]: Ուստի, լույսի պես պարզ է, որ սխալվում է Էդուարդ Դանիելյանը, երբ եզրակացնում է, թե հիշյալ նախարարական տոհմը կուսակալ է նշանակվել իր քաղաքական սահմաններով ու էթնիկական կազմով առաջինից բոլորովին տարբեր բուն Աղվանքի տարածքի վրա[5]: Հայկական աղվանագիտության այսօրվա նվաճումներից ետընթաց[6] այսպիսի մտահանգումը հիմնավորելու համար, մերօրյա հետազոտողը «Հայոց պատմությունից» քաղում է բուն Աղվանքին և աղվանացիներին վերաբերող հաղորդումները և գտնում, որ Խորենացին գիտենալով նրանց, չէր կարող այլ երկիր կոչել Աղվանք: «Ուրեմն ինչու՞,– հռետորական հարցով դիմում է նա ընթերցողին կամ, ավելի շուտ իրեն,– պետք է Մովսես Խորենացին «Աղուանք» անվաներ Երասխից մինչև Հնարակերտ ընկած տարածքը, երբ ինքը հստակ գիտեր «բուն Աղուանքի» մասին» (էջ 39): Այսպիսով, առկա հաղորդումից բխող իրական հետևության փոխարեն Է. Դանիելյանը բռնագբոսիկ հարցադրումներով փորձում է այլ մեկնաբանություն տալ նրան և ստանալ իրեն ցանկալի հիմնավորումը: Մինչդեռ խնդիրը պարզ է, երբ այն դիտարկում ենք իր պատմական ժամանակաշրջանի մեջ: Խորենացու ժամանակներում «Աղուանք» աշխարհագրական անվան տարածումը Հայոց Արևելից կողմերի կամ Ուտիքի ու Արցախի վրա արդեն իրականություն էր և պատմահայրը «Աղուանք» ասելով նկատի ուներ հենց այդ կողմերը, որով և արտացոլում է նաև նույն տեղանվան կիրառության նոր ոլորտը[7]:*

*Է. Դանիելյանն իր ներկա հայտարարություններով, փաստորեն, ոչ միայն աչք է փակում պատմահոր հաղորդման այն մասի վրա, ուր մատնանշվում է, որ Վաղարշակ հայոց թագավորի ձեռնարկումներն ուղղված էին Մեծ Հայքի արևելյան կողմերի կարգավորմանը, այլև այդ կողմերի համար նրա ուղղակիորեն ցույց տված սահմաններին և, ըստ էության, թույլ տալիս իր բացասական հետևանքներով հղի հակապատմական սխալ և այն ներկայացնում որպես թե «ըստ Խորենացու» կատարված եզրահանգում: Ի դեմս Առանի Հայկազունի Սիսակյան տոհմից սերված նախարարական տունը հայտարարելով բուն Աղվանքի կուսակալ, նա Կ. Վ. Տրներից ու Ֆ. Մամեդովայից հետո տուրք է տալիս այն կեղծ վարկածին, թե Առանը բուն Աղվանքի առաջին տիրակալն էր և աղվանական ցեղերի նախա-*

---

[3] *Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի (այսուհետև՝ Կաղանկատվացի), Երևան, 1983, էջ 8:*

[4] *Խորենացի, էջ 113, նաև Կաղանկատվացի, էջ 8:*

[5] *Ի տարբերություն հայ պատմիչների ցույց տված Աղվանքի (իմա՛ Հայոց Արևելից կողմանց)՝ իր միաձույլ հայ էթնոսով ու նշված սահմաններով, բուն Աղվանքի սահմանները հյուսիսում անցնում էին Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի հարավային՝ Կերաուևյան ճյուղով և սրա շարունակությունը կազմող Սուանաս (Սուզգայիթ) գետով, արևելքում՝ Կասպից ծովով, հարավում Կուր, իսկ արևմուտքում Ալազան գետերով և բնակեցված էր 26 տարալեզու, սեփական առաջնորդներով ղեկավարվող ցեղերով (տես՝* Страбон. География, пер. статьи и комменарии Г. А. Стратановского. М., 1964, XI, IV, 6: *Նաև Հ. Ս. Սվազյան. Աղվանից աշխարհի պատմություն, (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 54-80):*

[6] *Հայկական աղվանագիտության նվաճումներից մեկն էլ «բուն Աղուանք», «Հայոց Աղուանք», «Հայոց Արևելից կողմանք» կամ «Խորին աշխարհ Հայոց» հասկացությունների հստակ տարբերակումն է:*

[7] *Ավելացնենք, որ ոչ միայն Խորենացին, այլև վաղմիջնադարյան գրեթե բոլոր հայ հեղինակները «Աղուանք» ասելով հասկացելեն Կուրի և Արաքսի միջև ընկած տարածքը, որն է հենց Առանի տիրույթը:*

*հայրը՝ աղվանական համարելով նաև նրանից սերված հայկական ծագմամբ չորս ժողովուրդներին*[8]*: Խնդիրն ունի և իր երկրորդ կողմը: Վերը նշած սկզբնաղբյուրների համաձայն, Առանի տիրույթի հարավային սահմանը Արաքս գետն էր*[9]*: Իսկ եթե, ըստ Է. Դանիելյանի, Առանը բուն Աղվանքի տիրակալն էր, ապա կնշանակի, որ վերջինիս սահմանը ևս ձգվել է մինչև Արաքս գետ և ընդգրկել նմանապես հայկական Ուտիք ու Արցախ նահանգները. մի բան, որին իրական փաստերի աղավաղումներով ու իրենց հարմար մեկնաբանություններով այնքան ջանում են հասնել աղրբեջանցի հեղինակները:*

*Այսպիսով, բուն Աղվանքի առաջին կուսակալներին հայկական ծագում վերագրելը Է. Դանիելյանի կողմից պարզապես հակագիտական է, կեղծ տեսություն, որ գալիս է ծառայելու ինքնահնար պատմությունների սիրահարներին: Պատմահայր Մովսես Խորենացու քննարկվող հաղորդմանը պետք է մոտենալ ուղիղ իմաստով և, խնդիրներ չփնտրելով այնտեղ, որտեղ դրանք չկան, այն դիտել ինչպես որ կա. որպես Մեծ Հայքի հյուսիսարևելյան կողմերի կամ Ուտիքի ու Արցախի վաղ շրջանի պատմությանը վերաբերող սկզբնաղբյուրային տեղեկատվություն*[10]*: Աշխարհագրական առումով հայոց հյուսիսարևելյան կողմերը, ըստ Խորենացու, կոչվել է նաև «Աղուանք», որը բուն Աղվանքից տարբերելու համար, դեռևս XVIII դարում, Մխիթարյան միաբանության անդամ հայր Միքայել վարդապետ Չամչյանն անվանակոչել է «Աղուանք հայոց»*[11]*, որն ընդունվել և Աղվանքի պատմությամբ զբաղվող հայ մասնագետների կողմից գործածվում է Ուտիքի ու Արցախի միացյալ տարածքի համար որպես երկրամասին տրվող «Հայոց Արևելից կողմանք», «Հյուսիսարևելյան կողմանք» կամ «Խորին աշխարհ Հայոց» երկրանուններից մեկը:*

*Աղվանքի քաղաքական պատմության մեջ շրջադարձային էր Աղվանից մարզպանության կազմավորումը: Այն ուղեկցվեց հայկական նահանգներ Ուտիքի ու Արցախի Մեծ Հայքից անջատմամբ և նորաստեղծ վարչաքաղաքական միավորի կազմում ընդգրկմամբ: Է. Դանիելյանն անդրադարձել է նաև այս հարցերին և իր նկատառումները հայտնել նաև դրանց առնչությամբ: Ներկայացնելով հարցի քննությամբ զբաղված հեղինակների կարծիքները՝ նա հրնթացս մեղադրել է մեզ այն բանում, որ նշելով Ն. Ադոնցի կարծիքը մենք հղում ենք կատարում նրա գրքի մի էջի վրա, որտեղ չկա մեզ հետաքրքրող իրադարձությունների համար նրան վերագրած տարեթիվը՝ 387 (էջ 29, ծանոթ. 88): Պարզվում է, որ Է. Դանիելյանին թվերով արտահայտված տարեթիվ է պետք եղել, որն էլ չգտնելով շտապել է ի ցույց դնել դա: Մինչդեռ նշված տարեթիվը թաքնված է հենց այդ նույն էջում տպագրված մեծանուն գիտնականի հետևյալ տողերում. «Հայաստանի բաժանումը երկու Արշակունի ժառանգների և ապա երկու պետությունների միջև ուղեկցվում էր ծայրամասային հողերի նոր մասնատումներով. արդյունքում Հայաստանը մնաց մարզպանության սահմաններում»*[12]*: Որոշակի տարեթիվ չնշելով հանդերձ, ավելի պարզ չես ասի: Ն. Ադոնցը խոսում է այն պատմական իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել հայ պատմագրութ-*

---

[8] *Հմմտ.* К. В. Т р е в е р, Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э. – VII в. н. э.). М. – Л., 1959, с. 66 и далее; Ф. М а м е д о в а. Кавказская Албания и албаны. Баку, 2005, с. 59, 140.

[9] *Խ ո ր ե ն ա ց ի, էջ 113, Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 8:*

[10] *Այս տեսակետից հարցին ճիշտ է մոտեցել Ա. Հակոբյանը:* А. А. А к о п я н. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 144–145:

[11] *Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784 յօրինեալ ի հայր Միքայել վարդապետէ Չամչյանց, Հ. Գ., Երևան, 1989, էջ՝ նոր էջակալումով, 131:*

[12] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, *էջ* 230: *Ըստ մեր ընդդիմախոսի՝ երկու պետությունները, որոնք բաժանել էին Հայաստանը միմյանց միջև, Արևելահռոմեական կայսրությունն էր ու Սասանյան Իրանը (Տե՛ս Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ. էջ 29, ծանոթ. 88, Ն. Ադոնցից քաղված սույն մեջբերման միջանկյալ բացատրությունները): Ճիշտ չէ: Արևելահռոմեական կայսրությունը պատմության ասպարեզում հայտնվում է միայն 395 թ. հետո՝ Հռոմեական կայսրության երկու մասի բաժանվելու հետևանքով՝ Բյուզանդիա անվամբ, իսկ Հայաստանը բաժանվել է 387 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև:*

*յան մեջ վաղուց ընդունված 387 թ.: Իսկ Է. Դանիելյանը պնդում է, թե իբր «ամեն անգամ խոսելով «մասնատված տարածքների» և Հայաստանի մարզպանական ժամանակաշրջանի մասին, Ն. Ադոնցը նկատի է ունեցել 428 թ. այլ ոչ թե 387 թ.» (էջ 29, ծանոթ. 88): Մերկապարանոց հայտարարություն: Հետազոտողը Ն. Ադոնցին վերագրում է մի միտք, որը նա երբեք չի ունեցել: Դա Է. Դանիելյանի մտացածին գաղափարն է, որ հորինել է նա մեզ հակադրվելու համար: Իսկ իրականում շրջադարձային այս իրադարձությունների կապակցությամբ ինչ ժամանակաշրջան է նկատի ունեցել մեծարգո գիտնականը, բացի վերոբերյալից, երևում է նաև նրա այլ տողերից. «…մարզպանական Հայաստանը իր մեծությամբ զգալիորեն զիջում էր թագավորական ժամանակաշրջանի Հայաստանին: Նրա սահմաններից դուրս մնաց ծայրամասային տարածքային գոտին. հատկապես՝ 1. Գուգարքը, 2. Ուտիքը, 3. Արցախը, 4. Փայտակարան-Բաղասականը… «Աշխարհացոյցը» այդ մարզերը ընդգրկում է Հայաստանի մեջ, բայց նշում, որ Գուգարքը հայերից վերցվել է իբերների կողմից, Ուտիքն ու Արցախը՝ Աղվանքի, Փայտակարանը՝ Ատրպատականի մեջ…: Նշված հողերի անջատումը Հայաստանից թվագրվում է Արշակի անկման ժամանակաշրջանով՝* IV հարյուրամյակի երկրորդ կեսով՝ *Հայաստանի բաժանման նախօրեին»[13]: Ահա այն հիմքերը, որոնք թույլ են տվել մեզ 387 թ. նշել որպես Ն. Ադոնցի ցույց տված տարեթիվ: Բայց թե ինչի վրա է հիմնվում Է. Դանիելյանն, առարկելով մեզ, կամ ինչպես է համատեղում Ն. Ադոնցի ցույց տված IV դարը V դարի (428 թ.) հետ, որ հայտարարում է, թե Ադոնցն «ամեն անգամ նկատի է ունեցել 428 թ.», միայն իրեն է հայտնի: Այդպիսին մենք չտեսանք բերված քաղվածքներում, իսկ ինքը՝ հետազոտողն էլ իր ասածը հաստատող գոնե մեկ փաստ չի նշում, հետևաբար մնում է մտածել, որ նա թույլ է տալիս գիտակցված անճշտություն:*

*Նման «պարզաբանումից» հետո Է. Դանիելյանն անցնում է Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակաշրջանի, նրանում Արցախի և Ուտիքի ընդգրկված լինել-չլինելու խնդիրներին և դրանց շուրջը հայ պատմագրության մեջ առկա կարծիքներին: Նախապես ունենալով իր մոտեցումն այդ հարցերին՝ նա գրում է, թե «ինչպես ստորև կտեսնենք Արցախը ամբողջապես, իսկ Ուտիքն իր զգալի մասով Աղվանից մարզպանության կազմի մեջ չեն եղել» (էջ 14, ծանոթ. 27), ապա իր այս կարծիքի համար հիմք ստեղծելու նպատակով դիմում է սկզբնաղբյուրների, մասնավորապես՝ «Աշխարհացոյցի» հակառակն ապացուցող հաղորդումները ժխտելու կամ առնվազն կասկածի տակ առնելու ոչ խրախուսելի մեթոդին[14]:*

*«Աշխարհացոյցն» այն եզակի պատմաաշխարհագրական հուշարձանն է, որում հեղինակն ուղղակիորեն հաղորդում է, որ հայկական Ուտիք ու Արցախ նահանգներն իրենց գավառներով խլվել են Մեծ Հայքից և տրվել Աղվանքին, «Արցախ յերի կալով Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան…* զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի հայոց*»[15], կամ* «Ուտիք… ունի գաւառս զոր Աղուանք ունին՝ եւթն»[16]:

*Անաչառ ուսումնասիրողի համար ոչինչ ավելին պետք չէ: Ասված է աներկբա ու պարզ: Պատահական չէ, որ ոչ մի ուսումնասիրող մինչ օրս որևէ կասկած չի հայտնել նրանց ճշմարտացիության վերաբերյալ և դրանք օգտագործել է իրենց բուն նշանակությամբ: Բայց արի ու տես, որ Անանիա Շիրակացու սույն հաղորդման այդ մասերը ճիշտ չեն թվացել մերօրյա հետազոտողին և նա փորձել է վերանայել նրանց գիտական արժեքը: Առաջ քաշելով այն միտքը, թե «Աշխարհացոյց»-ը նախ կազմվել է V դարում (հեղինակ Մովսես Խորենացի), այնուհետև VII դարում այն խմբագրվել և շարունակվել է (հեղինակ Անանիա Շիրակացի)[17],*

[13] Հ. Ա դ ո ն ց. *Նշվ. աշխ., էջ 225:*

[14] *Իրենց տեսակետներին չհարմարվող սկզբնաղբյուրների տեղեկությունների ժխտման արատավոր մեթոդը հատուկ է ադրբեջանցի հեղինակներին. ձգտելով ցանկալին ներկայացնել իրականության տեղ: Մանրամասն տե՛ս Հ. Ս. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի պատմություն, էջ 42, 60:*

[15] *Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 33:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Մինչ այդ, Է. Դանիելյանը «Աշխարհացոյցի» հեղինակ անվերապահորեն ճանաչում էր միայն Անանիա Շիրակացուն և դա ապացուցելու ջանքեր չէր խնայում: Գրելով VII դարի հայկա-*

*իսկ հետագայում նույնպես խմբագրական միջամտություններ են կատարվել» (էջ 30), նա, առանց որևէ տեքստաբանական քննության, ընդմիջարկություններ է հայտարարում Արցախի գավառների համար ասված «զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի հայոց» և Ուտիքի գավառներին վերաբերող «զոր Աղուանք ունին» կապակցությունները (էջ 30) և որպես այդ արհեստածին վարկածի հիմնավորում, հավելում. «…նախ այստեղ (խնդրո առարկա հաղորդման մեջ – Հ. U.) խոսք չկա Սասանյանների մասին «մարզպանություն» կազմավորելու առումով, և երկրորդ՝ ոչ մի սկզբնաղբյուր տեղեկություն չի հաղորդում այն մասին, թե բուն Աղվանքը երբևիցե իրենից այնպիսի ուժ էր ներկայացրել, որ Հայաստանից տարածքներ նվաճեր և իր կազմում պահեր» (էջ 30): Այլ խոսքով մեջ բերված տողերի հեղինակը առաջարկում է պարզապես չհավատալ սկզբնաղբյուրի այն տեղեկություններին, որոնք հակասում են իր տեսակետին և որոնց արժանահավատությանը, ինչպես արդեն նշել ենք վերևում, մինչև օրս ոչ ոք չի կասկածել: Բայց եթե նույնիսկ Շիրակացու հաղորդման քննության նյութ դարձած հատվածները, հետազոտողի մատուցած պատճառներով պայմանավորված, իսկապես ընդմիջարկություններ էլ լինեին, ապա դրանից ոչինչ չէր փոխվի: Եթե ոչ հեղինակը, ապա, միևնույն է, ընդմիջարկողն է իր միջամտությամբ արտացոլել այն իրողությունը, որ Արցախն ու Ուտիքը, լինելով հայկական նահանգներ, ժամանակաշրջանի ինչ-որ հատվածում անջատվել են Մեծ Հայքից և միացվել Աղվանքին: Տեղին է այստեղ բերել «Աշխարհացույց»-ի քաջ գիտակ, Է. Դանիելյանի ուսուցիչ և լավ բարեկամ U. S. Երեմյանի «կռահումն» այն մասին, որ ձեռնարկի «քարտեզների ընդօրինակություններ ի ընթացքում ներմուծվել են նոր տվյալներ, որոնց ժամանակագրական սահմանը, սակայն, ինչպես բնագրի լավագույն օրինակների քննությամբ պարզել է մեծանուն գիտնականը, որ VII դարի վերջից և VIII դարի սկզբից այս կողմը չեն անցնում»[18]: Հետևաբար այդ ընդմիջարկություններն ևս արտացոլում են մինչև VIII դարի սկիզբը տեղի ունեցած այն փոփոխությունները, ինչի մասին խոսվում է: Այնուհանդերձ տեսնենք, թե որքանով են հիմնավորված Է. Դանիելյանի բերած, իբրև թե իր վարկածը հաստատող, փաստարկները: Որպես դրանցից առաջինը նա նշում է Շիրակացու համապատասխան հաղորդման մեջ մարզպանություններ «կազմավորելու առումով» Սասանյանների մասին «խոսք» չլինելը: Այսինքն պատմաբան-գիտնականին պետք էր բառացի արտահայտություն, որպեսզի հավատ ընծայեր կարդացածին: Բայց մի՞թե Սասանյանները չէին Հարավային Կովկասի իրենց հպատակ երկրներում՝ նախ Մեծ Հայքում, ապա Աղվանքում և քիչ ավելի ուշ նաև Վիրքում, մարզպանություններ կազմավորում, որը, հայտնի է, ընթանում էր տարածքային ձևափոխություններով: Այդ ո՞ր մեկի համար են աղբյուրները ուղղակի հաղորդմամբ ասում այն, ինչ Աղվանքի առումով ուզում է տեսնել Է. Դանիելյանը: Դրանք տեսական խնդիրներ են, որոնք չեն մատնանշվում, սակայն ձևավորվում են մասնագետների կողմից մատենագիտական տեղեկությունների հիման վրա: Իսկ Մովսես Կաղանկատվացու երկում բավարար թվով տեղեկություններ կան Աղվանքում պարսիկ մարզպանների ներկայության և գործունեության մասին, որ վստահորեն ընդունենք երկրում Սասանյանների ձևավորած մարզպանության գոյության և, հետևաբար, տարածքային այն փոփոխությունների փաստը, որ ցույց է տալիս «Աշխարհացույցը»: Եվ մի միջանկյալ դիտարկում ևս կապված Է. Դանիելյանի այսպիսի մոտեցման հետ: Ասենք թե կար էլ նրա պահանջած արտահայտությունը, բայց արդյո՞ք այն ևս հեղինակի կողմից, հանուն իր վարկածի, չէր արժանանա նույնատիպ ժխտողական վերաբերմունքի, ինչ որ և «Աշխարհացույց»-ի նշված հաղորդումները: Չէ՞ որ,*

*կան տիեզերագիտական աշխատությունների մասին մի ուսումնասիրություն* (Э. Л. Д а н и е л я н. Армянские космографические труды VII века о состоянии вселенной. Ереван, 1978), *նա ողջ գրքում այն միտքն է տանում, թե Անանիա Շիրակացին է «Աշխարհացույց»-ի հեղինակը, իսկ եզրակացության մեջ այդ ներկայացնում է արդեն որպես ապացուցված փաստ և վերջակետ դնում՝ իրեն համախոհ նշելով U. S. Երեմյանին. «Ներկա ժամանակաշրջանում,– գրում է նա,– U. S. Երեմյանը նույնպես հակված է այդ մտքին» (նույն տեղում, էջ 112)»:*

[18] *U. S. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 19:*

*ինչպես տեսանք, նման դիրքորոշումը խորթ չէ նրան:*

*Միամիտ է հնչում Աղվանքի հզորության կամ նվաճումներ կատարելու, դրանք պահելու կարողության ու այս ամենի շուրջ աղբյուրների լռության մասին դատողությունները: Աղվանքին դրա համար ոչ ուժ էր պետք և ոչ էլ այն գործի դնելու անհրաժեշտություն: Այդ գործառույթներն իրականացնում էր Սասանյան Իրանը՝ ելնելով տարածաշրջանում վարած իր քաղաքականությունից և տեղի ունեցող իրադարձություններում Աղվանքը ոչ մի դերակատարություն չուներ*[19]*:*

*Եվ վերջինը: Ինչպես երևում է, Է. Դանիելյանը «Աշխարհացույցի» նմանօրինակ հաղորդումներից ծանոթ է եղել միայն քննարկվող հատվածին, որ կարծելով, թե այն միակն է, հայտարարել է ընդմիջարկություն: Մինչդեռ նրանում մի վկայություն էլ կա մինչև Կուր գետն ընկած տարածքը Հայաստանից Աղվանքին անցած լինելու մասին և հեղինակը, նշելով դա, հարկ է համարել որոշակիության համար երկիրն անվանել «բուն Աղուանք» և տալ վերջինիս իրական սահմանները, առանց այդ ավելացված տարածքի: «Աշխարհ Աղբանիա,– գրում է հայ աշխարհագետը,– այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կավկասավ, մինչև զՀայոց սահմանաւ, առ Կուր գետով.* թէպէտ և աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: *Բայց մէք ասասցուք* զբուն աշխարհն Աղուանից, *որ ընդ մէջս է մեծի գետոյն Կուրայ և Կովկաս լերինն»*[20]*: Ակներև է, որ սույն վկայությունը իր ընդհանուր բնույթի տեղեկատվությամբ արտահայտում է այն նույն իրողությունը ինչ որ և Ուտիքի և Արցախի (իրենց գավառների անվանական թվարկումներով) օտարմանը վերաբերող մեզ արդեն ծանոթ հաղորդումները: Այս տեսակետից նրանք լրացնում են միմյանց ու ընդգծում աշխատության հեղինակի հետևողականությունը տեղի ունեցածը ճշգրտորեն ներկայացնելու հարցում և, որ ավելի կարևոր է տվյալ պարագայում, բացառում են նրանցից մեկի հետագայում տեքստում կատարված լրացումների կամ փոփոխությունների արդյունք լինելու գաղափարը:*

*Այսպիսով, ճիշտ չէ Է. Դանիելյանն իր «նորարարություններով», իսկ մենք բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ Ուտիքն ու Արցախը, ինչ-որ ժամանակ, միացվել են Աղվանքին և ստացել նոր վարչաքաղաքական կարգավիճակ: Մնում է միայն որոշել այդ փոփոխությունների ժամանակաշրջանը: Դրանով զբաղվել են շատ ուսումնասիրողներ, որոնց շարքերը լրացրեց Է. Լ. Դանիելյանը՝ իր մտահայեցողությամբ: Թվում էր, թե ստանձնելով նման պարտավորություն, մեր հետազոտողը կներկայացներ թարմ ու մյուսներից աննկատ մնացած փաստեր և ծանրակշիռ խոսքով առաջնթաց կարձանագրեր հարցի լուսաբանման գործում: Զուր ակնկալիք:*

*Աղվանից մարզպանության կազմավորման և դրանում հայկական նահանգների ընդգրկման ժամանակաշրջանի մասին ուսումնասիրողները միասնական կարծիքի չեն: Առաջարկվել են տարբեր տարեթվեր՝ 387, 428, 451, 461 կամ 450-487 թթ*[21]*: Տեսակետ կա նաև, որ նախ Ուտիքն է անջատվել Հայաստանից և 428 թ. միացվել Աղվանքին, ապա միայն Արցախը՝ 451 թ.*[22]*: Է. Դանիելյանն անդրադառնում է առաջադրված տարեթվերին և, հիմնականում հենվելով Եղիշեի հաղորդումների վրա, որոնց համաձայն, իրոք, Արցախը մինչև Ավարայրի հերոսամարտը, դրա ժամանակ և դրանից անմիջապես հետո ընկած տարիներին եղել է Հայոց կազմում, ոչ միայն ժխտում է այդ տարեթվերն ընդհանրապես, այլև Արցախի երբևիցե Աղվանից մարզպանության կազմում լինելու իրողությունը: Նա գրում է. «Եղիշեի՝ Արցախին վերաբերող ոչ մի հիշատակությունը չի վկայում, որ այն եղել է Աղվանից մարզպանության կամ թագավո-*

---

[19] *Աղվանքի անզորության մասին նույն միտքը՝ ասված Խաղխաղի առիթով, տեսնում ենք նաև Բ. Ուլուբաբյանի մոտ. «Վարդանանց պատերազմի ժամանակ,– գրում է նա,– չկար բուն Աղվանքի մի այնպիսի միացյալ թագավորություն, որն ի վիճակի լիներ Հայաստանից կորզել Խաղխաղը և պահել իբրև իր թագավորանիստ ձմերոցը», տես՝ Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 139:*

[20] *Աշխարհացույց, էջ 28-29:*

[21] *Տես. Հ. Ս. Սվազյան. Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը.– ՊԲՀ, 1979, № 4, էջ 210-212, նույնի՝ Աղվանից աշխարհի պատմություն, էջ 203:*

[22] А. А. Акопян. Албания-Алуанк…, *էջ 114, 118, 130:*

*ության կազմում թե՛ մինչ 450–451 թթ. ապստամբությունը, թե՛ այդ ընթացքում և թե՛ դրանից հետո» (էջ 35) և մի քանի տող ներքև դարձյալ գրում. «Ոչ մի փաստ չկա Արցախը V դարի առաջին կամ էլ երկրորդ կեսի առումով Աղվանքի կազմի մեջ դիտելու համար» (էջ 35): Եղիշեի հաղորդումներին, որոնց ծանոթ են նաև մյուս ուսումնասիրողները (Բ. Հարությունյան, Հ. Սվազյան, Ա. Հակոբյան) և գրեթե նույն կարծիքին են խնդրո առարկա հարցում նրա տեղեկությունների չափի գնահատման մեջ, Է. Դանիելյանն ավելացնում է Կորյունի ու Խորենացու իր վարկածի հետ ոչ մի կապ չունեցող հաղորդումներն Աղվանքում Մաշտոց վարդապետի գործունեության մասին ու այս առնչությամբ հիշատակում թագավոր Եսվաղենի, եպիսկոպոս Երեմիսդի և Բաղասականի եպիսկոպոսի անունները և դրանով իբրև թե մեկ անգամ ևս հաստատում է իր վերոհիշյալ եզրակացությունը և կրկնում միտքը՝ այս անգամ, սակայն, Արցախի կողքին դնելով Ուտիքը՝ բայց մի փոքր այլ կարգավիճակով: «Այսպիսով,– ամփոփում է նա,– V դարում ամբողջ Ուտիքի և Արցախի իբրև Աղվանքի հետ վարչաքաղաքական միավորներ հանդես գալու մասին ոչ մի տեղեկություն չկա: Այստեղից մնում է եզրակացնել, որ Արցախը ամբողջապես և Ուտիքը զգալի չափով ինքնիշխան էին» (էջ 37): Ուշագրավը մեր հեղինակի մոտ այն է, որ Ուտիքի մասին էլ չունենալով այն փաստերը, ինչ նա փնտրում է Արցախի հարցում, այնուամենայնիվ, գտնում է, որ այն, թեկուզ մասամբ, մտել է Աղվանից մարզպանության մեջ: Իհարկե, ժխտելով «Աշխարհացույցի» հաղորդումների ճշմարտացիությունը, կարելի է այդպիսի ընդհանրացնող բնույթի հետևություններ անել, բայց դա պատմության քննության մեթոդ չէ, որով առաջնորդվում է մեր հեղինակը: Մինչդեռ հենց հայ աշխարհագետի տվյալներն են, որ խոսում են հայկական նահանգների վարչաքաղաքական կացության փոփոխության մասին, և հիմք ընդունելով դրանք, պետք է հետազոտությունը տարվեր մինչև այդ փոփոխությունների ժամանակաշրջանի որոշումը և ոչ թե սահմանափակվեր Եղիշեի բոլորին ծանոթ տվյալների կրկնումներով:*

*Աղվանից մարզպանության կազմավորումը Հարավային Կովկասում Սասանյանների ամուր հաստատվելու վաղեմի ծրագրի միջոցառումներից մեկն էր, որի իրագործումը միայն ժամանակի խնդիր էր[23]: Այն վրա հասավ Պարսից տերության դեմ Աղվանքի թագավոր Վաչե Բ-ի ապստամբությամբ: Օգտվելով Սասանյան Իրանում Հազկերտ Բ-ի մահից հետո (457 թ.) նրա որդիների միջև ծագած գահակալական կռիվների հետևանքով ստեղծված խառնաշփոթությունից՝ Վաչե Բ-ը հրաժարվեց իր վասալական պարտավորությունները կատարելուց և հինգ տարի (457–461 թթ.), որոնցից վերջին երկու տարում ռազմական գործողություններ վարելով, ընդդիմացավ պարսից տերությանը[24]: Ապստամբությանը վերջ դրեց Հազկերտի կրտսեր որդին՝ Պերոզը, որը հաղթելով եղբորը՝ 459 թ. տիրացավ գահին և ձեռնարկեց Աղվանքի վերահնազանդեցման գործը: Երկամյա ռազմական գործողությունների միջոցով ապստամբությունը ճնշելուց և ապստամբների հետ դաժան հաշվեհարդար տեսնելուց հետո, արյաց արքա Պերոզը 461 թ. գահից հեռացրեց Վաչե Բ-ին և մոլեգնած սկսեց վերացնել այն ամենը, ինչը կպայմանավորեր թագավորական իշխանության գոյությունը երկրում: «Ամենաչար և ամբարիշտ թագաւորն Պարսից Պերոզ,– գրում է Մովսես Կաղանկատվացին,– զայրացեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն,* կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի միանգամայն*»[25]: Երկրի ամբողջ թագավորությունը վերացնել ցանկացող Պերոզը, պարզ է, այն փոխարինելու էր իշխանության նոր համակարգով: Իսկ այդպիսին կարող էր լինել միայն ու միայն մարզպանական կառավարումը, որն, ի դեպ, Սասանյանների նախընտրելի ձևն էր թագավորությունների վերացումից հետո: Այդպես էին նրանք վարվում ամեն անգամ, երբ իրենց հպատակ*

---

[23] *Հարցը ժամանակին քննվել է մեր կողմից (տե՛ս Հ. Ս. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, էջ 210-218, ն ո ւ յ ն ի՝ Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199-207, ուստի այստեղ մեր անդրադարձումները ուղեկցվում են որոշ կրկնություններով:*

[24] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 15-17, Ե ղ ի շ է. Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, թարգմ. և ներած. Ե. Տեր-Մինասյանի (այսուհետև՝ Ե ղ ի շ է), Երևան, 1989, էջ 396-400:*

[25] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 42:*

*երկրներում վերջ էին դնում թագավորական իշխանություններին: Նրանց այդ վարվելաձևի մասին են խոսում ասորի պատմիչ Մշիխա Զեխան և բյուզանդացի պատմագիր Պրոկոպիոս Կեսարացին: «Արևելքի բոլոր թագավորներին հաղթելով,– գրում է նրանցից առաջինը,– փոխարենը (պարսիկները) իրենց ենթակա կառավարիչներ ու մարզպաններ էին նշանակել»[26]: Նույնը՝ Վիրքի օրինակով, հաստատում է Պրոկոպիոս Կեսարացին՝ գրելով. «Այն ժամանակից, երբ բարբարոսների (Ասիայի՝ իբերների՝ վրացիների – Հ. Ս.) մեծամեծները թագավոր Գուրգենի[27] հետ միասին որոշեցին ապստամբություն բարձրացնել … պարսիկները թույլ չէին տալիս, որ իրենց թագավոր կարգեն»[28]:*

*Ահա այսպիսի, գրեթե կանոն դարձած, սկզբունքով էին արյաց արքաները մարզպանություններ կազմավորում. նախ գահից հեռացնում էին թագավորներին ու ապա նրանց փոխարինում կրոնով ու քաղաքականությամբ իրենց հավատարիմ պարսիկ պաշտոնյաներով՝ մարզպաններով: Դա ուներ նաև իր պատճառները: Փորձը՝ Աղվանից արքա Վաչե Բ-ի ու վրաց թագավոր Գուրգենի օրինակներով, ցույց էր տվել, որ թագավորների առկայությունը հպատակ երկրներում, ժողովուրդների մոտ անկախության տրամադրություններ է ծնում, և նրանք հաճախ դիմում են ապստամբության: Դրանք կանխելու ձևերից մեկն էլ թագավորներին գահից հեռացնելն էր, որն էլ կիրառվում էր Սասանյանների կողմից:*

*Վարելով նման կանոնակարգված քաղաքականություն, կասկած չկա, որ Սասանյանները նույն ձևով վարվելու էին նաև Աղվանքում մարզպանություններ ձևավորելիս: Այստեղ էլ ճնշելով Վաչե Բ-ի ապստամբությունը, Պերոզ արյաց արքան, որ վստահ չէր կարող լինել, թե այն չի կրկնվի, 461 թ. հեռացնում է ապստամբ արքային գահից և նույն ժամանակ երկիրը վերածում մարզպանության: Միտքը, որ Աղվանից մարզպանությունը կազմավորվել է Վաչե Բ-ին գահից հեռացնելուց հետո միայն, հաստատվում է ևս մեկ վկայությամբ: Թե՛ Կաղանկատվացին և թե՛ Եղիշեն, պատմելով Վաչե Բ թագավորի կյանքի վերջին շրջանի մասին, հաղորդում են, որ նա, հեռացվելուց հետո, որպես բաժին իր հետ վերցրել էր միայն հորից ժառանգած կալվածքները «Իսկ սա (Վաչեն – Հ. Ս.), հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրեն էր առեալ հազար երդ»,– գրում է Կաղանկատվացին[29]: Ըստ Եղիշեի էլ Վաչեն «խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն հազար երդ. էառ զայն ի թագաւորն և նստաւ ի նմա»[30]: Նշելով, որ Վաչե Բ-ին թույլատրվել էր վերցնել սեփականության իրավունքով իրեն պատկանող հորից ժառանգություն ստացած երդերը, պատմիչները, փաստորեն, ցույց են տալիս, որ նրա իրավասության տակից դուրս էին մնացել արքունական կալվածքները և, ինչպես դժվար չէ ենթադրել, դարձել էին պարսից տերության սեփականությունը: Իսկ հայտնի է, որ Սասանյանները թագավորական իշխանությունները վերացնելիս սեփականացնում էին հենց արքունի հողերը:*

---

[26] *Մ շ ի խ ա Զ ե խ ա ս. Ադիաբենի եկեղեցու պատմություն.– Ասորական աղբյուրներ, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ., Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 84:*

[27] *Պատմիչի հիշատակած այս ապստամբությունը տեղի է ունեցել 523 թ. Վախթանգ Գորգասալին հաջորդած Գուրգեն թագավորի գլխավորությամբ (Տե՛ս* Очерки истории СССР III в., М., 1958, с. 251, *նաև* История Грузии. Т. I, Тбилиси, 1962, с. 110*): Ա. Հակոբյանը որպես այս ապստամբության տարեթիվ ցույց է տալիս 532 թ. (տե՛ս* А. А. А к о п я н. Албания-Алуанк…, с. 116*):*

[28] *Պ ր ո կ ո պ ի ո ս Կ ե ս ա ր ա ց ի. Պատերազմների մասին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, II, գլ. 28, էջ 154: Ինչպես երևում է սույն հաղորդումից, թագավորությունը Քարթլի-Իբերիայում վերացվել է նշված 523 թ., և երկիրը սկսել է կառավարվել մարզպանների միջոցով: Ա. Հակոբյանի կարծիքով մեր հարևան այս երկրում մինչև թագավորության վերացումը՝ մինչև 532 թ., երկրում դեռևս «428 (համենայն դեպս մինչև 450 թ.)» ստեղծվել էր մարզպանություն (տե՛ս* А. А. А к о п я н. Албания-Алуанк…, с. 116*), այսինքն՝ ընդունում է թագավորի կողքին մարզպանի գոյություն: Սակայն Պրոկոպիոսի սույն հաղորդումը ցույց է տալիս որ դա այդպես չէ, և թագավորներին հեռացնելուց հետո մարզպանություններ ստեղծելու Սասանյանների սկզբունքը գործել է նաև Իբերիա-Վիրքում:*

[29] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 17:*

[30] *Ե ղ ի շ ե, էջ 400:*

*Այսպիսով, աներկբա է, որ Աղվանից մարզպանությունը կազմավորվել է վերը նշած իրադարձությունների հետևանքով Վաչե Բ-ին գահից հեռացնելու ու երկրում թագավորական իշխանության վերացման հետ միաժամանակ՝ մինչև 461 թ.:*

*Աղվանից մարզպանության կազմավորումը այն բեկումնային քաղաքական իրադարձությունն էր, որի ժամանակ կարող էին կատարվել նաև այլ կարգի խոշոր փոփոխություններ: Այդպես էլ եղավ: Աղվանից մարզպանության կազմավորման պատեհ առիթը օգտագործելով, Սասանյանները որպես գործառույթի շարունակություն, նույն ժամանակ էլ, այն է՝ 461 թ. Մեծ Հայքից անջատում են Արցախ և Ուտիք նահանգներն ու միացնում Աղվանից մարզպանությանը: Դա էին թելադրում մի կողմից Մեծ Հայքը թուլացնելու, իսկ մյուս կողմից հայոց նահանգներից ու բուն Աղվանքից մեկ միասնական, վարչաքաղաքական-հարկային միավոր ստեղծելու և այդպիսով իրենց դիրքերը տարածաշրջանում հաստատուն պահելու նրանց քաղաքական շահերը:*

*Վերևում արդեն ասել ենք, որ հայ պատմագիտության մեջ կարծիք կա, թե Հայոց նահանգները մայր երկրից կտրվել են առանձին-առանձին և մարզպանությանը միացվել տարբեր ժամանակներում՝ Ուտիքը (ըստ կարծիքներից մեկի՝ նրա Խաղխաղ քաղաքը իր շրջակայքով[31]) 428 թ., իսկ Արցախը 451 թ. կամ ավելի ուշ[32]: Այս վարկածների հեղինակները հիմք են ընդունում Ուտիքի Խաղխաղ քաղաքի մասին Ագաթանգեղոսի և Եղիշեի հաղորդումները, ըստ որոնց՝ այն III դարի վերջերին «ձմեռոց էր արքայութեանն Հայոց»[33], իսկ V դարի կեսերին՝ «թագաւորացն Աղուանից»[34]: Ըստ նրանց, Խաղխաղի Աղվանից թագավորների ձմեռոցը լինելու հանգամանքը ցույց է տալիս, որ Ուտիքն այդ ժամանակաշրջանում եղել է Աղվանքի կազմում և, ուրեմն, մատնանշում է նրա վարչաքաղաքական կացության փոփոխության ավելի վաղ ժամանակաշրջան, քան կարելի է ընդունել Արցախի համար: Բայց հաշվի առնելով, որ խնդրո առարկա քաղաքը որպես սահմանամերձ և բնակլիմայական բարենպաստ պայմաններ ունեցող վայր, կարող էր հավասարապես հանգստյան վայր լինել թե՛ մեկ և թե՛ մյուս երկրի արքաների համար, գտնում ենք, որ մեր պատմիչների հիշյալ հաղորդումները հիմք չեն կարող ծառայել նման եզրակացության համար: Ուստի մնում է միայն ընդունել, որ հայկական այս երկու նահանգներն էլ անջատվել են Հայաստանից և միացվել Աղվանից մարզպանությանը իրար հետ՝ նույն 461 թ.:*

*Բուն Աղվանքի հետ կազմելով մեկ ընդհանուր վարչաքաղաքական միավոր՝ Ուտիքն ու Արցախը, իրենց էթնիկական կազմով ու բնույթով շարունակում են մնալ որպես հայկական մարզեր, բայց իբրև Աղվանից մարզպանության բաղադրիչներ, ողջ միավորի հետ սկսում են կրել «Աղուանք» անվանումը, որ նրանց համար ուներ լոկ աշխարհագրական իմաստ: «Աղուանք» անվան տարածումը Ուտիքի և Արցախի վրա ընդունում է և Է. Դանիելյանը, բայց ոչ թե որպես վարչաքաղաքական ենթակայության արդյունք, այլ ընդամենը եկեղեցական-իրավական հետևանք: Մասնավորապես Արցախի Աղվանքին միացվելու մասին «փաստերի բացակայությունը,– գրում է նա,– հուշում է, որ Աղուանք անվան տարածումը, Կուրի աջափնյակի վրա, ոչ թե վարչաքաղաքական ենթակայության, այլ եկեղեցական-իրավական հետևանք էր, այն էլ ավելի ուշ ժամանակներում» (էջ 32): Այստեղ հեղինակը թույլ է տալիս կրկնակի սխալ: Նախ, ինչպես տեսանք, կան այդպիսի փաստեր, և դրանք ժխտելով է սխալ հիմք ստեղծում իր սխալական եզրակացության համար և, երկրորդ, որ հարկ ենք համարում ասել, նման անվանափոխություններն ամենից առաջ վարչաքաղաքական կացությունների անմիջական արդյունք են, իսկ եկեղեցական ազդեցությունները՝ երևույթներ, որոնք գալիս են գաղափարապես ամրապնդելու ստեղծված քաղաքական կարգավիճակը և ստանում են այն ձևերը, ինչ ունենում են աշխարհիկ կարգերը: Եթե Արցախն ու Ուտիքը չունե-*

---

[31] *Բ. Հարությունյան. Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 2, էջ 89, 91:*

[32] *Նույն տեղում, նաև* А. А. Акопян. Албания-Алуанк…, с. 114, 118*:*

[33] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քնն. բնագիրը, Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 30:*

[34] *Եղիշե, էջ 150:*

*նային այնպիսի վարչաքաղաքական կացություն, որի մասին խոսվում է, ապա չէր կարող միտք անգամ լինել եկեղեցական որևէ ներգործության մասին, մանավանդ Աղվանից եկեղեցու կողմից, որ ինքն էր կրում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ազդեցությունը, ուստի և չէր կարող անվանափոխություն առաջացնել հայկական վարչական պատկանելություն ունեցող քաղաքական միավորների մոտ: Հայոց հին նահանգների միացյալ տարածքին տրվող նոր անվանումը միայն վարչաքաղաքական ենթակայության հետևանք էր: Եկեղեցահիրավական ազդեցությունն իր հերթին նպաստել է, որ «Ադուանք» տեղանունն ամրապնդվի երկրամասի վրա և դառնա նրան տրվող անվանումներից մեկը, բայց ոչ ավելին: Եվ իզուր է Է. Դանիելյանը «Արցախի և Ուտիքի առումով» առարկում Ն. Ադոնցին (էջ 32, ծանոթ. 108), որն իրավացիորեն գրում է. «…ծայրամասային շրջաններն ունեին վարչաքաղաքական, այլ ոչ թե եկեղեցական ծագում»[35], դրանց մեջ, անշուշտ, տեսնելով և ծայրամասային Ուտիք և Արցախ նահանգները:*

*Է. Դանիելյանի եզրահանգումներում կան նաև այլ կարգի անճշտություններ, կապված, օրինակ՝ Սանատրուկ-Սանեսանի անձնավորության կամ անձնավորությունների, Վաչագան Բարեպաշտի դինաստիական պատկանելության ու գործունեության ոլորտի, Առանշահիկ տոհմի իրական տիրապետության ժամանակաշրջանի, օգտագործած գրականության արժևորման հարցում նրա ցուցաբերած սուբյեկտիվ մոտեցման ու այլ խնդիրների հետ, որոնց, սակայն, կանդրադառնանք հետագայում, կոնկրետ հարցերի քննության ժամանակ: Միայն վերջում ավելացնենք, որ Է. Դանիելյանի գիրքը ոչ մի նոր խոսք չմուծելով Աղվանքի պատմության մեջ, դեռ մի բան էլ անճշտություններ է մտցնում արդեն լուսաբանություն ստացած հարցերում:*

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

[35] Ն. Ա դ ո ն ց. *Նշվ. աշխ., էջ 230:*